ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 2236-Ա « 19 » հունիսի 2024թ.

ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ԳՈԳՈԼԻ ՓՈՂՈՑ Հ.4/3 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԱՐՏԻՆ ՋԱՆԻԲԵԿԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ ԵՎ ԱՐԹՈՒՐ ՍԱՄՎԵԼԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Մարտին Ջանիբեկի Սողոմոնյանի (ծնված 14.09.1960թ.) և Արթուր Սամվելի Սողոմոնյանի (ծնված 06.07.1984թ.) 15.04.2021թ. բանալի հ.2011695 դիմումը: Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Գոգոլի փողոցի հ.4/3 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 431.84քմ, որից 192.0քմ մակերեսով հողամասը Մարտին Ջանիբեկի Սողոմոնյանին և Արթուր Սամվելի Սողոմոնյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է (սեփականության վկայագիր՝ 1992թ. հ.419, ժառանգության վկայագիր հ.2417):

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ կադաստրի կոմիտեի 25.01.2021թ հ.ԱՏ-25012021-01-0058, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 16.02.2024թ. հ.470 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 13.05.2024թ. հ.20-Ել-Ս-12062 եզրակացությունը, համաձայն որի Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Գոգոլի փողոցի հ.4/3 տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով.

1.Վերականգնել Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Գոգոլի փողոցի հ.4/3 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Մարտին Ջանիբեկի Սողոմոնյանի և Արթուր Սամվելի Սողոմոնյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 192.0քմ մակերեսով հողամասին կից 239.84քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 239.84քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2.Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

3.ՀՀ կառավարության 15.12.2005թ. հ.2330-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի հիման վրա ք.Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Գոգոլի փողոցի հ.4/3 հասցեում գտնվող 431.84քմ հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:

4. Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Գոգոլի փողոցի հ.4 հասցեի բնակելի տանը տրամադրել «Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Գոգոլի փողոց, հ.4/3» հասցեն:

5.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

7. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ